

Առաջնորդության դրսևկորման առանձնահատկությունները ժամանակակից պատերազմների բնույթի հաշվառմամբ


Բաղդասարյան Սվետլանա Մ.

Հոգեբանական գիտությունների թեկնածու,

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ախագ լաբորանտ,

ՀՀ ՊԵ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան,

*Ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի
գիտնական-վերլուծաբան (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0000-0001-5677-3107>
svetlana.baghdasaryan7@gmail.com

ՀՏԳ՝ 159.9; EDN: UBMRY

DOI: 10.58587/18292437-2024.4-39

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ առաջնորդության առանձնահատկություններ, զինված ուժեր, ժամանակակից պատերազմներ, առաջադրանքային կառավարում, հուզականային հատկություններ, հոգեբանական կայունություն:

Особенности проявления лидерства с учетом характера современных войн

Багдасарян Светлана М.

кандидат психологических наук,

Старший лаборант Института Арменоведческих исследований ЕГУ,

Учёный-аналитик центра исследований стратегического руководства и лидерства, Национальный оборонный исследовательский университет МО РА (Ереван, РА)

Аннотация. В настоящее время развитие вооружения и военной техники, в том числе сверхточного оружия, других форм и способов борьбы (психологических, информационных, асимметричных) сделали современные войны быстрыми, динамичными и внезапными. Все это, в свою очередь, привело к изменению методов управления, значительному сокращению времени принятия решений и выполнения боевых задач, общему переосмыслению деятельности военных. В современных войнах «центром тяжести» стали умственные способности, морально-психологическое состояние и эмоционально-волевые качества личного состава Вооруженных Сил (ВС), долгосрочное влияние которых обеспечивает стратегическое превосходство над противником при наличии небольших ресурсов. Такие условия требуют от личного состава вооруженных сил демонстрации компетентности и способностей быстрого реагирования, что возможно в случае обучения и реализации лидерских особенностей, принципов. Цель работы – проанализировать особенности лидерства с учетом характерных черт современных войн, а также выявить требований, которые направлены на Вооруженные Силы. Методологическую основу работы составляют методы теоретического анализа, сравнения, обобщения и сравнения научной литературы. Исследования особенности лидерства играют важную роль в противодействии вызовам современной войны, а его внедрение позволит ВС сохранить свое конкурентное преимущество.

Ключевые слова и словосочетания: особенности лидерства, вооруженные силы, современная война, директивное управления, эмоционально-волевые качества, психологическая устойчивость

Peculiarities of leadership manifestation taking into account the nature of modern wars

Baghdasaryan Svetlana M.

Ph.D. in psychological science,

Senior Laboratory Assistant, Institute for Armenian Studies of YSU,

Research Fellow, Center for Research on Strategic Leadership and Management,

National Defense Research University, Ministry of Defense of the Republic of Armenia (Yerevan, RA)

Abstract. At present, the development of weapons and military equipment, including super-precision weapons and other forms and methods of combat (psychological, informational, and asymmetric), has made modern wars fast, dynamic, and sudden. All of this, in turn, led to changes in management methods, a significant reduction in the time required to make decisions and perform combat tasks, and a general rethinking of the military's activities. In modern wars, the “center of gravity” has become the mental abilities, moral-psychological state, and emotional-volitional qualities of the personnel of the Armed Forces (AF), the long-term impact of which provides strategic superiority over the enemy with few resources. Such conditions require military personnel to demonstrate competence and rapid response capabilities, which is possible if leadership traits and principles are taught and implemented. The purpose of the work is to analyze the peculiarities of leadership with regard to the characteristics of modern warfare as well as identifying requirements focused on the Armed Forces. The methods of theoretical analysis, comparison, generalization,

and comparison of scientific literature form the methodological basis of the work. Research on the characteristics of leadership plays an important role in countering the challenges of modern warfare, and its implementation will enable the AF to maintain its competitive advantage.

Keywords & phrases: peculiarities of leadership, armed forces, modern warfare, mission command, emotional-volitional traits, psychological stability

Ներածություն

Վերջին տասնամյակում տեխնոլոգիաների, արհեստական բանականության (ԱԲ) աննախադեպ զարգացումները հանգեցրել են նրան, որ ռազական գործողությունները դարձել են ավելի անկանխատեսելի, հանկարծակի: Միաժամանակ, անհրաժեշտ է ուշադրության արժանացնել այն հանգամանքին, որ տեղային հակամարտություններն ուղեկցվել են և կշարունակեն ուղեկցվել առանձնակի ուժգնությամբ և սովորաբար դրանք նպատակ են հետապնդում հակառակորդ պետության պետական համակարգի լիակատար ոչնչացման [2, էջեր 9-16]: Նման անորոշ պայմաններում ՉՈՒ-երի խնդիրը առկա և սպասվելիք մարտահրավերները վերլուծելու և հակազդելու համար հնարավոր մեխանիզմների, կառավարման համապատասխան մեթոդների մշակումն ու ներդրումն է, ինչը կհանգեցնի ՉՈՒ շինարարության որակապես նոր մակարդակի: Ռազմական գործողությունների բնույթից ելնելով՝ մասնավորապես մեծ ուշադրություն է հարկավոր դարձնել ՉՈՒ կառավարման համակարգում ճկուն մեթոդների և մոտեցումների գործարկմանը, քանի որ ավանդական ընթացակարգերով հնարավոր չէ կրճատել որոշումների կայացման արագությունը, նպաստել կոմպետենտության մակարդակի բարձրացմանը կամ բոլոր մակարդակներում (ռազմավարական, օպերատիվ և մարտավարական) ձևավորել փոխվստահություն, որոնք հիմնական գործոններից են լարված իրավիճակներում մարտական խնդիրը հաջող կատարելու համար: Հետևաբար զգալի տեղ պետք է տալ առաջնորդության մոտեցումներին, այդ թվում՝ «Առաջադրանքային կառավարմանը» (ԱԿ) կառավարման օպերատիվության մակարդակը բարձրացնելու, կենտրոնացված համակարգում ապակենտրոնացված գործողություններ կատարելու, ինքնուրույնություն, նախաձեռնողականություն ցուցաբերելու համար: Պետք է հաշվի առնել զինված ուժերում արտացոլված առաջնորդության պարադոքսները (առաջնորդությունն ընդդեմ հիրետարիակ կառավարման, ճկունությունն ու ստեղծարարությունն ընդդեմ կարգապահության, բարդությունն ու քառալ ընդդեմ պարզության և զծայնության), որոնցից բխում են մարտահրավերներն ու հնարավորությունները [6, էջ 165]: Առաջնորդության մոտեցումների ներդրումը պահանջում է հաշվի առնել մշակութային առանձնահատկությունները, իրականության մոդելների փոփոխությունները

և ռազմական գործողությունների վարման բնույթը, քանի որ միշտ չէ, որ մեկ պետությունում հաջողաժ կառավարման մոդել կարող է նույն կերպ դրական արդյունքներ կանխատեսել այլ պետության կառավարման համակարգի համար:

Առաջնորդության դրսևորման առանձնահատկությունները զինված ուժերում

Արագ փոփոխվող աշխարհում մրցունակ մնալու համար ՉՈՒ-երը պետք է լիարժեք տիրապետեն և կիրառեն, ոչ միայն արդի սպառազինություն և ռազմական տեխնիկա, այլ կառավարման ճկուն մեթոդներ և ոճեր, որոնք հատկապես անհրաժեշտ են ներկայիս մարտական գործողություններում հաջողություն ունենալու կամ հակառակորդի նկատմամբ գերակայություն ունենալու համար: Այդ կառավարման ոճերից է «առաջնորդությունը», որը գտնվում է միջգիտակարգային տիրույթում և օգտակար հնարավորություններ է առաջարկում զինված ուժերին փոփոխություններին համահունչ գործունեություն ծավալելու համար՝ չսպասելով քառալ ավարտվելուն:

Առաջնորդությունը լավագույնս ձևակերպել է կառավարման գիտության տեսաբան Պիտեր Դրաքերը. «Կառավարման էությունը ճիշտ գործողություններ կատարելն է, իսկ առաջնորդության էությունը՝ գործողությունները ճիշտ կատարելը»՝ ներկայացնելով կառավարման և առաջնորդության տարբերությունը [9]: Ամերիկացի պետական և ռազմական գործիչ, Եվրոպայում ՆԱՏՕ-ի Միացյալ զինված ուժերի առաջին Գերագույն գլխավոր հրամանատար, ԱՄՆ-ի 34-րդ Նախագահ Դուայտ Դեյվիդ Էյզենհաուերն այսպես է մեկնաբանել առաջնորդության իր պատկերացումը. «առաջնորդությունն արվեստ է ոգեշնչելու մեկ ուրիշին իր իսկ կամքով անելու այն, ինչ ինքներդ եք պահանջում» [4]: Ելնելով այս տեսական ձևակերպումներից՝ զինված ուժերում առաջնորդության էությունը երկակի դրսևորում ունի. նախ՝ սա անհատական կազմակերպական մտածելակերպ է, և երկրորդ՝ կառավարման ոճ և փոփոխություն:

Առաջնորդության ուսումնասիրությունը զինված ուժերում ունի մի քանի առանձնահատկություններ, որոնք հնարավորություն են տալիս ղեկավար-առաջնորդներին լարված իրավիճակներում գործել՝ ըստ պլանավորած ընթացակարգի. 1. առաջնորդությունը մտածողություն է, փոփոխություն, փոփոխամաձայնության հասնելու արվեստ, 2. կառավարման կենտրոնացված

համակարգում ապակենտրոնացված գործողություններ կատարելն է, 3. ինչ և ինչու հարցերին պատասխանելն է, 4. ճիշտ գործողություններ կատարելն է, 5. անձնային հատկություններ զարգացնելն է, 6. իշխանական աստիճանակարգության համակարգում իր տեղն ու դերը ճիշտ որոշելու համար կառավարման համապատասխան կանոններով առաջնորդվելն է: Այժմ ներկայացնենք, թե ինչպես կարող են այս առանձնահատկությունները նպաստել դիմակայելու ժամանակակից պատերազմի մարտահրավերներին: Քանի որ, ժամանակակից պատերազմներում «ժանրության կենտրոնը» դարձել է հակառակորդի ՉՈՒ-երի զինժառայողների մտավոր կարողությունները, հուզականային հատկությունները՝ նպատակ ունենալով բարոյական հյուծման, տագնապի, նյարդահոգեկան անկայունության զգացման ձևավորմամբ նվազեցնել մարտական ակտիվությունը և նպատակի կարևորությունը: Հետևաբար հրամանատարի ռազմավարական մտածողությունը հնարավորություն կտա ապագա իրադարձությունները կանխատեսելու կարողությամբ և հսկայական ճնշման ներքո դժվար որոշումներ կայացնելու վճռականությամբ ցանկալի նպատակի հասնել: Այն ենթադրում է նաև մարտի դաշտում առաջ եկած անկանխատեսելի իրավիճակներում ստեղծարար մոտեցումներ ցուցեբերելու կարողություն՝ խուսելն արագ շրջանցելու և ոչ սովորական որոշումներ կայացնելու համար: Պատահական չէ, որ դեռևս մ. թ. ա. 6-րդ դարում ռազմական բնագավառի չինացի ականավոր տեսաբան Սուն Յզին իր «Երկ ռազմարվեստի մասին» աշխատության մեջ գորավարի ռազմավարական մտածողությունը համարում է դեպի հաղթանակ տանող ճանապարհ [3, էջեր 35-36]:

Մյուս առանձնահատկությունը վերաբերում է կենտրոնացված կառավարման համակարգում ապակենտրոնացված գործողություններին: Արդի պատերազմներում օպերացիայի հաջողելը կանխորոշող գործոններից են կառավարման համակարգի արագագործությունը և ապակենտրոնացված եղանակով գործողություններ կատարելը, որոնք թույլ են տալիս բոլոր մակարդակի հրամանատարներին (ռազմավարական, օպերատիվ և մարտավարական) միասնաբար ըմբռնել օպերացիայի մտահղացումը, ապահովել գործողությունների վարման ներդաշնակությունն ու անընդհատությունն՝ անգամ կապի երկարատև խափանման պայմաններում՝ հիմքում ունենալով փոխվստահության, կոմպետենտության, փոխըմբռնման սկզբունքները և առաջնորդին բնորոշ որոշ անձնային հատկություններ: Ապակենտրոնացված եղանակներ ասելով, ի նկատի ունենք ինքնուրույն գործել, նախաձեռնողականություն ցուցաբերել և պատասխանատվություն կրել յուրաքանչյուր

որոշման համար, որի կատարման ընթացքը չի վերահսկվել, քանի որ եղել է փոխվստահություն և փոխըմբռնում, ինչը առաջնահերթ է ժամանակակից պատերազմների մարտահրավերներին դիմակայելու համար [5]: Այս դեպքում առաջնորդը շատ լավ ճանաչելով իր ենթակա անձնակազմի ներուժը, նրանց թույլ և ուժեղ կողմերը, մասնագիտական և հոգեբանական կոփվածության մակարդակը կարողանում է պատվիրակել խնդիրներն՝ ըստ ունակությունների:

Առաջնորդության կարևոր առանձնահատկություն է, որ պատերազմի պայմաններում յուրաքանչյուր մակարդակի հրամանատարական կազմ առաջնորդվի ինչ և ինչու հարցադրումներով՝ նպաստելով կարճ ժամանակահատվածում որակյալ որոշումներ ընդունել և դրանք հաջողությամբ կատարել: Այս առումով արժեքավոր է Բոյդի հանգույց կամ փուլաշրջան (դիտում, կողմնորոշում, որոշում և ձեռնարկում) ամերիկյան տեսությունը, որի նպատակն է արագ անցնել փուլերը՝ ապահովելով թշնամուց առաջանցիկություն և թույլ կողմերն օգտագործելով թույլ չտալ դուրս գալ այդ հանգույցից, այլ կերպ ասած շրջափակման մեջ զգել հակառակորդին [8]: Բոյդի հանգույցի օրինակով ակնհայտ է դառնում, որ վերոնշյալ հարցադրումներն են նպաստում գործառույթները պատվիրակել, մասնավորապես մարտի դաշտում նման կերպ առաջնորդվելը ռազմավարական նշանակություն ունի:

Կարևոր է նշել, որ առաջնորդության դրսևորումներից է զինված ուժերում մեծ տարածում գտած առաջադրանքային կառավարում (ԱԿ) հայեցակարգը, որը կազմված է համակարգաստեղծ յոթ սկզբունքներից: Այն հիմնված է պրուսական «Աուֆտրագստակտիկ» հայեցակարգի վրա, որի էությունն է կառավարման փուլաշրջանի յուրաքանչյուր հատվածում հակառակորդից առաջ անցնել և սեղմ ժամկետներում որակյալ որոշումներ ընդունել [11]: ԱԿ-ն անհատական և կազմակերպական մտածելակերպ է, որը պետք է ներթափանցի հաստատության գործունեության բոլոր ոլորտները: Իր հերթին՝ յուրաքանչյուր հրամանատարական մակարդակում ունակ, հարմարվող և ճկուն ռազմական ղեկավարներ ունենալու անհրաժեշտությամբ է պայմանավորված ԱԿ-ի ներդրումը: Բանակում ԱԿ-ի կիրառությունը հենվում է երեք հիմնական հասկացությունների վրա, որոնք հրամանատարները կիրառում են ռազմական (մարտական) գործողությունների ժամանակ՝ խոչընդոտները հաղթահարելու համար: Այդ հասկացություններն են՝ փիլիսոփայություն, մարտական կառավարման գործառույթ և իրագործում [1, էջեր 83-98]: Օրինակ «Փոթորիկ անապատում» հայտնի օպերացիայում տեղի ունեցավ կառավարման կենտրոնացված համակարգից անցում դեպի

ապակենտրոնացված համակարգ: Վերջին տարիների ռազմական գործողությունների (Արցախյան, ռուս-ուկրաինական, իսրայելա-պաղեստինյան պատերազմներ) փորձի ուսումնասիրությունները նույնպես ցույց են տալիս, որ առաջադրանքային կառավարման սկզբունքները կիրառվել են ինքնաբավ ստարաբաժանումներում, որտեղ կոմպետենտ զինծառայողները կարողացել են ինքնուրույն որոշումներ կայացնել, անորոշ իրավիճակներում նախաձեռնողականություն ցուցաբերել, ոչ սովորական գործողություններ ձեռնարկել՝ չսպասելով հրամանատարի կարգադրություններին:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ ԱԿ-ն ոչ միայն պայմանավորում է զորքի առաքելության արդյունավետ իրականացումը, այլև կարող է ազդեցություն ունենալ զործունեության մոտիվացիայի վրա: Ինքնորոշման տեսության համաձայն (SDT) անհատի հոգեբանական կարիքների բավարարումը հանգեցնում է ներքին մոտիվացիայի և ինքնակարգավորման, որն էլ նպաստում է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը [7, էջեր 1-17]: Ինքնակարգավորումն ու մոտիվացիան անմիջականորեն կապված են հուզական ինտելեկտի հետ, որը լարված պայմաններում հնարավորություն է տալիս իրավիճակին համարժեք վարք ցուցաբերել և սթրեսը դարձնել ոչ թե կազմալուծող, այլ խթանող գործոն: Այդ պատճառով ԱԿ-ն նաև մեծ ուշադրություն է դարձնում հրամանատարական կազմի անձնային հատկությունների զարգացման խնդրին, քանի որ մասնագիտական առաջադրանքների հաջող կատարումը մեծապես կախված է անձի հոգեբանական վիճակից:

Այսպես, մի կողմից արագ փոփոխվող ռազմավարական միջավայրն անուղղակիորեն փոխել է ռազմական գործողություններ վարելու եղանակներն ու ձևերը, մյուս կողմից՝ ոչ պետական դերակատարների քողարկված գործունեության անը ստիպում են վերանայել զինվորականի գործունեությանը ներկայացվող պահանջները: Ելնելով այս ասպեկտներից՝ առաջնորդության առանձնահատկությունների ներդրումը զինված ուժերում կենսական նշանակություն ունի, քանի որ հրամանատարին առաջարկում են տարբեր մոտեցումներ հավանական պատերազմի բնույթի փոփոխություններին համարժեք որոշումներ կայացնելու, գործողությունները պլանավորելու և արագ կերպով իրականացնելու համար:

Չինված ուժերին ուղղված առաջնորդության պահանջները

Արդի ռազմավարական միջավայրում առաջնորդության հիմնարար դրույթները պահպանում են իրենց կարևորությունը, մինևույն ժամանակ ռազմավարական առաջնորդներից պահանջելով ունենալ հմտությունների լայն

շրջանակ և բազմակողմ մարտահրավերների խորը ըմբռնում: Ժամանակակից պատերազմներն առաջ են քաշում առաջնորդության պահանջներ, որոնք հստակորեն նախանշում են նախկին և ներկա կառավարման մոտեցումների միջև եղած տարբերությունները: Չինված ուժերում առաջնորդության պահանջներից առանձնակի կարևորվում են մի քանիսը, որոնք հավասարաչափ արտացոլվում են տարբեր երկրների զինված ուժերում:

Այսպես, տեղեկատվական պատերազմների պայմաններում զինծառայողները ստիպված են լինում առնչվել տվյալների մեծ բազաների հետ՝ դրանց մշակման և համակարգման հրամայականով, հետևաբար ավել բարդանում է որոշումների ընդունման գործընթացը: Այս բարդությունը ռազմավարական առաջնորդներից պահանջում է ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, այլև զարգացած վերլուծական հմտություններ և տեղեկույթի կառավարման մեթոդների տիրապետում՝ ռազմավարական առավելություններ ձեռք բերելու համար: Բացի այդ պատերազմի բնույթի փոփոխությունը պահանջում է հարմարվողական վարք ցուցաբերել նոր իրողությունների նկատմամբ, որոնք ներառում են ոչ վանդական պատերազմավարման եղանակներ և առաջադեմ տեխնոլոգիաների մեծածավալ կիրառում: Նման իրավիճակներին համահունչ քայլերու համար հրամանատար-առաջնորդները պետք է պատասխանատվություն և նախաձեռնողականություն դրսևորեն որոշակի գործողություններում և պատրաստ լինեն այլընտրանքային ռազմավարություններ մշակելուն [10]:

Հաջորդ պահանջը դա առաջնորդության զարգացման ծրագրերի մշակում և իրականացումն է բոլոր մակարդակների (մարտավարական, օպերատիվ և ռազմավարական) հրամանատարական կազմի շրջանում, որոնք միտված կլինեն կոմպետենտության մակարդակի բարձրացմանը՝ շեշտը դնելով հոգեբանական և սոցիալական հմտությունների զարգացման վրա: Ելնելով այն հանգամանքից, որ զինծառայողները պարբերաբար ենթարկվում են մարտական սթրեսի, հետևաբար առաջնահերթ է հուզական ինտելեկտի, սթրեսակայունության զարգացման ուղղված վարժանքների, սիմուլյացիաների ներառումը ծրագրերում, որոնք հնարավորություն կտան լարված պայմաններում խուճապի չմատնվել և սթրեսը դարձնել խթանող գործոն:

ՉՈՒ-երի տարբեր միավորումների միջև համատեղ գործողությունների անցկացման միտումը հրամանատարական կազմից պահանջում է խորը պատկերացումներ ունենալ հակառակորդի հնարավորությունների, հոգեբանական վիճակի և հնարավոր սպառնալիքների մասին: Այս տիրույթում առաքելությունը հաջո-

դությանը իրականացնելու համար անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել միջանձնային հարաբերությունների կառուցման, բանակցային հմտությունների և համագործակցային մտածողության զարգացմանը:

Առաջնորդությունը ՉՈՒՖ զինծառայողներից պահանջում է առաջնահերթություն տալ հոգեբանական կայունության բավարար մակարդակի ձևավորմանը՝ ելնելով տեղեկատվական պատերազմի գործիքակազմի ակտիվ կիրառումից, քանի որ այն միտված է քիչ ռեսուրսներով ռազմավարական գերակայություն ունենալ հակառակորդի նկատմամբ: Այսինքն կեծ տեղեկատվական արշավների կազմակերպմամբ հնարավոր է կարճ ժամանակահատվածում հակառակորդի զինված ուժերի և հասարակության բարոյահոգեբանական վիճակի վրա զգալի ազդեցություն ունենալ՝ առաջ բերելով անգործության զգացողություն, խուճապ, անորոշության զգացողություն, որոնք նպաստում են մարտական ակտիվության մակարդակի նվազեցմանը և թույլ չեն տալիս մարտական խնդիրը հաջողությամբ կատարել [6, էջեր 172-173]: Այստեղից հետևություն, որ մեծ ուշադրություն է հարկավոր դարձնել ժամանակակից պատերազմների բնույթին համապատասխան հոգեբանական պատրաստման ծրագրերի մշակմանը:

Ահռելի նշանակություն ունեն այն մարտահրավերները, որոնց բաղխվում է ՉՈՒՖ-երը առաջնորդության ներդրման գործընթացում: Դրանք հիմնականում կապված են մշակութային խոչընդոտների, բյուրոկրատական և կոմֆորմիստական մոտեցումների, արդյունավետության ոչ ճիշտ գահատման, ընթացքի անտեսման, հնարավորությունները երկրորդելու, միջակության, ռիսկի գնալու պատրաստակամության բացակայության հետ, որոնք թույլ չեն տալիս զարգացնել ռազմավարական մտածողություն և ներդնել այլընտրանքային կառավարման մոդելներ ժամանակին համահունչ քայլելու համար:

Այսպիսով՝ ՉՈՒՖ-երում առաջնորդության պահանջների կատարումը ռազմավարական նշանակություն ունի, քանի որ դրանք օգնում են ռազմավարական առաջնորդներին պատրաստության բավարար վիճակ ունենալ և մարտական գործողությունների պայմաններում սեղմ ժամկետներում խնդիր կատարել: Առաջնորդությունը բարձրացնում է զինվորական գործի նկատմամբ հարգանքը՝ առաջնահերթ սկզբունքներից համարելով ռազմական կրթության արդիականացումը:

Եզրակացություն

Ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների բնույթի փոփոխությունը մեծապես պայմանավորված է գիտության և տեխնոլոգիաների առաջընթացով, որոնք ներկայացնում են կառավարման նոր մոտե-

ցումների ներդրման հրամայականը: Այս համատեքստում չափազանց կարևոր նշանակություն ունի արդի փուլում առաջնորդության առանձնահատկությունների գործնական կիրառումը, որոնք ժամանակակից պատերազմներում ներգրավվելու և հաղթելու համար կունենան հիմնաքարային նշանակություն: Այդ առանձնահատկությունները վերաբերում են ինչպես ֆիզիկական պատրաստությանը, այնպես էլ սոցիալական, հոգեբանական հատկություններին, որոնք կարող են կիրառվել ռազմական օպերացիաների պլանավորման և իրականացման ընթացքում: Ժամանակակից և ապագա պատերազմներում ներգրավվելու և հաղթելու համար կարևորագույն նշանակություն ունի ժամանակակից պատերազմների բնույթի հաշվառմամբ հրամանատարական կազմին առաջնորդության մոտեցումների ուսուցումը և առաջնորդին բնորոշ հատկությունների զարգացումը, ինչը թույլ կտա վստահորեն հակազդել ՉՈՒՖ-երի դեմ ուղղված մարտահրավերներին ու սպառնալիքներին: Այս նպատակի իրականացման համար հիմնային են ռազմական կրթական ծրագրերի վերամշակումները և այնպիսի վարժանքների, սիմուլյացիաների անցկացումը, որոնք հիմնված կլինեն առաջնորդության պահանջների վրա:

Օգտագործած գրականության ցանկ

1. **Հայրապետյան, Ա.**, Չորքերի կառավարման արդիական եղանակը և ՉՈՒՖ-երում դրա ներդրման խոչընդոտները: // Հայկական բանակ, № 2, էջ 83-98, 2023: <https://doi.org/10.61760/18290108-bbw23.2-83>
2. **Հովհաննիսյան, Հ.**, Ապագայի պատերազմների և զինված հակամարտությունների առանձնահատկությունները: // Տարածաշրջան և աշխարհ, № 2 (51), էջ 9-16, 2024: <https://doi.org/10.58587/18292437-2024.2-9>
3. **Սուն Ցզի,** Երկ ռազմարվեստի մասին և **Նիկոլո Մաքիավելի,** Տիրակալը: Աշխատանքային տեքստեր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի հրատ., 2022, № 4, 119 էջ:
4. **Barcharach, S.** Leadership Without Presumption: Lessons From Eisenhower, <https://shorturl.at/QKlde> (link has been shortened). Accessed: 26.07.2024
5. **Col Mark C. Boone** (2021). Decentralized Decision Making. Marine Corps Gazette. <https://shorturl.at/BLY54> (link has been shortened). Accessed: 22.07.2024
6. **Kark, R., Karazi-Presler, T. & Tubi, S.** (2016). Paradox and Challenges in Military Leadership Leadership Lessons from Compelling Contexts (Monographs in Leadership and Management, Vol. 8). Publisher: Emerald Group Publishing Limited. <https://doi.org/10.1108/S1479-35712016000008031>.
7. **Knevelsrud, Hans-Christian, Ottesen Sørlie, Henrik & Valaker, Sigmund** (2023). Mission command: A self-determination theory perspective //

- Military Psychology, № 35(6), p. 1-17.
<https://doi.org/10.1080/08995605.2023.2252718>
8. John Boyd and The OODA Loop.
<https://shorturl.at/nRdEh> (link has been shortened).
Accessed: 18.07.2024
 9. Management is doing things right, leadership is doing the right things <https://u.to/pLnOIA> (link has been shortened). Accessed: 17.07.2024
 10. Military Leadership Challenges: Navigating Complexities of 21st Century.
<https://shorturl.at/S9qKQ>. (link has been shortened).
Accessed: 15.07.2024
 11. Mission Command: Command and Control of Army Forces” (ADP 6-0). Headquarters, Department of the Army. Washington, D.C., 31 July 2019, P. 1-3, point 1-14

Сдана/Հանձնվել է՝ 31.07.2024
Рецензирована/Գրախոսվել է՝ 07.08.2024
Принята/Ընդունվել է՝ 14.08.2024